«Հաստատում եմ»
«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան»
հիմնադրամի ռեկտոր,
տեխն. գ. դ. պրոֆեսոր _____ Ռ. Ռ. Սահակյան

«15» 10 2020 թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՀԱՄՄԻԿ ՍԵՐԳԵՅԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ «ՄՏԱՎՈՐ ՀԵՏԱՄՆԱՑ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ԺԳ.00.03 «ՀԱՏՈՒԿ ՄԱՆԱԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համիկ Սերգեյի Սարգսյանի «Մտավոր հետամնաց կրտսեր դպրոցականների ինքնասպասարկման հմտությունների զարգացման մանկավարժական պայմանները» թեմայով ատենախոսությունը և սեղմագիրը քննարկվել են Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի նիստում (Արձ. թիվ 10, կայացած՝ 13.10.2020թ.):

Մասնակցում էին Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի ժ.պ., մ.գ.թ. դոցենտ՝ Լ. Բաղդասարյանը, ամբիոնի դասախոսներ՝ մ.գ.դ. պրոֆեսոր Պ. Գևորգյանը, հ. գ. թ. դոցենտներ՝ Ն. Կոստանդյանը, Վ. Միրզոյանը, Մ. Շահվերդյանը, Մ. Մազմանյանը, Վ. Եղիազարյանը, դասախոս՝ Ա. Խաչատրյանը, մ.գ.թ. դոցենտներ՝ Զ. Գրիգորյանը, Ա. Հովհաննիսյանը, Ա. Հարությունյանը, Ք. Վիրաբյանը, ասիստենտներ՝ Ն. Ներկարարյանը, Լ. Մարուքյանը, մ.գ.թ.՝ Լ. Դանիելյանը:

Հ. Ս. Սարգսյանի ատենախոսական աշխատանքը նվիրված է հատուկ մանկավարժության արդիական խնդիրներից մեկին, որն ուսումնասիրում է հոգեֆիզիկական զարգացման խանգարում ունեցող երեխաների հասարակության մեջ ներառման պատրաստման տեսական հայեցակետերը և գործնական ուղիները՝ մասնավորապես մշակելով մանկավարժական պայմաններ մտավոր զարգացման խանգարում ունեցող կրտսեր դպրոցականների ինքնասպասարկման հմտությունների զարգացման համար: Գրականության վերլուծությունը /Л.С. Мирский, 1994; Г.В. Васенков, 1998; Е.Ю. Сухаревская, 2008; Л.А.Мардакаева, Е.А. Орлова, 2012; Р.Н. Азарян,

2016 և այլք/ և գործնականում կատարված աշխատանքները, զարգացման տարբեր խանգարումներ ունեցող դպրոցականների հատուկ և ներառական կրթության համակարգի կատարելագործման այս փուլում ցույց են տալիս, որ առանձնահատուկ կարևոր նշանակություն ունի այս երեխաների ինքնուրույն կյանքի նախապատրաստման տեսագործնական մոտեցումների և պայմանների մշակումը:

Մտավոր զարգացման խանգարում ունեցող կրտսեր դպրոցականների հիգիենայի, կենցաղային, սպասքից օգտվելու և ինքնասպասարկման այլ հմտությունների տեսական հայեցակետերի, գործնական ուղիների և մանկավարժական պայմանների ուսումնասիրումը և մշակումը, որպես այս երեխաների աշխատանքային դաստիարակության նախնական ձևեր, արդիական են, ունեն տեսական, գործնական և սոցիալական կարևոր նշանակություն:

Խնդրի տեսական հայեցակետերի վերլուծությունը վկայում է հիմնախնդրի ոչ բավարար մշակվածությունը, ինչը զգալիորեն դժվարեցնում է՝ մտավոր զարգացման խանգարում ունեցող կրտսեր դպրոցականների ինքնասպասարկման հմտությունների զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների կազմակերպման ժամանակ ուսուցիչների և դաստիարակների կողմից արդյունավետ միջոցների ընտրությունը: Հ. Ս. Սարգսյանի կողմից առաջ են քաշվել ատենախոսական աշխատանքի վերոգրյալ հիմնական դրույթները:

Հայցորդը իր հետազոտության առջև դրել է նպատակ՝ մշակել տեսական մոտեցումներ, օրինակելի ծրագիր և ստեղծել հատուկ մանկավարժական պայմաններ թեթև և չափավոր մտավոր զարգացման խանգարում ունեցող կրտսեր դպրոցականների ինքնասպասարկման կարողությունների և հմտությունների դաստիարակության համար:

Հետազոտության գիտական նորույթն է.

- Ներառական, հանրակրթական և հատուկ /օժանդակ/ դպրոցների մտավոր զարգացման խանգարում ունեցող կրտսեր դպրոցականների ինքնասպասարկման կարողությունների և հմտությունների դաստիարակության և զարգացման աշխատանքների դրվածքի տեսական վերլուծություն.
- թեթև և չափավոր մտավոր զարգացման խանգարում ունեցող կրտսեր դպրոցականների ինքնասպասարկման կարողությունների և հմտությունների դաստիարակության և զարգացման հարցերում ուսուցիչների, դաստիարակների և ծնողների իրազեկվածության մակարդակի բացահայտում.

- 1-4-րդ դասարաններում սովորող թեթև և չափավոր մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխաների ինքնասպասարկման գործնական կարողությունների և հմտությունների մակարդակի բացահայտում.
- թեթև և չափավոր մտավոր զարգացման խանգարում ունեցող կրտսեր դպրոցականների ինքնասպասարկման կարողությունների և հմտությունների մանկավարժական պայմանների ստեղծում, տեսական մոտեցումների և օրինակելի ծրագրի մշակում:

Հետազոտական աշխատանքի տեսական նշանակությունը թեթև և չափավոր մտավոր զարգացման խանգարում ունեցող կրտսեր դպրոցականների ինքնասպասարկման կարողությունների և հմտությունների դաստիարակության և զարգացման մանկավարժական մոտեցումների և պայմանների, աշխատանքների դրվածքի, առաջարկվող ծրագրի տեսական հիմնավորումն է, ինչպես նաև հետազոտությունից ստացված արդյունքների տեսական վերլուծությունն է:

Ատենախոսական աշխատանքի գործնական նշանակությունը թեթև և չափավոր մտավոր զարգացման խանգարում ունեցող կրտսեր դպրոցականների կենսագործունեության կարևոր ոլորտներում ինքնասպասարկման տեսական գիտելիքների, գործնական կարողությունների և հմտությունների դաստիարակության և զարգացման ուղղությամբ տեսական դրույթների և օրինակելի ծրագրի մանկավարժական պայմանների առաջարկումը, մշակումն ու ներդրումն է դպրոցի պայմաններում:

Առաջարկվում են հատուկ վարժություններ, առաջադրանքներ, խաղեր, իրական գործնական իրավիճակներ, որոնք ուղղված են առաջինից չորրորդ դասարաններում սովորող թեթև և չափավոր մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխաների ինքնասպասարկման գործնական կարողությունների և հմտությունների դաստիարակությանն ու զարգացմանը:

Ատենախոսության նյութերը լայն կիրառում կունենան հատուկ կուրսերի դասախոսությունների պատրաստման ժամանակ, հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի ուսանողների, ինչպես նաև հարակից ոլորտների՝ մանկավարժության, հոգեբանության, կինեզիոլոգիայի, ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի և այլն:

Հետազոտության արդյունքների հավաստիությունը և հիմնավորումը ապահովված է կատարված աշխատանքի ծավալով, հետազոտվող համակազմի բավարար քանակով, հետազոտության առջև դրված խնդիրների ժամանակակից և համապատասխան

մեթոդների կիրառմամբ, ինչպես նաև գիտափորձի արդյունքների բարեխիղճ և ուշադիր վիճակագրական մշակմամբ:

Ատենախոսական աշխատանքի հիմնական տեսական և գործնական դրույթների հավաստիությունը և հիմնավորումը արտահայտվում է հետազոտության եզրակացություններում և արդյունքներում, ինչպես նաև հեղինակի հրապարակումներում, հետազոտության ստացված տվյալների քննարկումներում, ելույթներում և դպրոցում ներդրված արդյունքներում:

Կարելի է հաստատել, որ կատարված հետազոտության արդյունքում հեղինակը ստացել է կոնկրետ և օբյեկտիվ տեղեկատվություն, որի հիմքում կարելի է առավել արդյունավետ կառավարել թեթև և չափավոր մտավոր զարգացման խանգարում ունեցող կրտսեր դպրոցականների կենսագործունեության կարևոր ոլորտներում ինքնասպասարկման տեսական գիտելիքների, գործնական կարողությունների և հմտությունների դաստիարակության և զարգացման գործընթացը:

Հ. Ս. Սարգսյանի կողմից իրականացված երկարամյա հետազոտության զգալի արդյունքներից կարելի է առանձնացնել հետևյալը.

1. Խնդրի բազմակողմանի և խորը ուսումնասիրում, տարբեր դպրոցների մտավոր զարգացման խանգարում ունեցող կրտսեր դպրոցականների ինքնասպասարկման կարողությունների և հմտությունների դաստիարակության և զարգացման աշխատանքների դրվածքի տեսական վերլուծություն.
2. թեթև և չափավոր մտավոր զարգացման խանգարում ունեցող կրտսեր դպրոցականների խաղային, ուսումնական աշխատանքային և այլ գործունեության տեսակների ժամանակ ինքնասպասարկման կարողությունների և հմտությունների դաստիարակության և զարգացման հարցերում ուսուցիչների, դաստիարակների և ծնողների իրազեկվածության մակարդակի որոշում.
3. տարրական դասարաններում սովորող թեթև և չափավոր մտավոր զարգացման խանգարում ունեցող երեխաների ինքնասպասարկման գործնական կարողությունների և հմտությունների մակարդակի որոշում.
4. տվյալ համակազմի երեխաների ինքնասպասարկման կարողությունների և հմտությունների մանկավարժական պայմանների ստեղծում, տեսական մոտեցումների և օրինակելի ծրագրի մշակում և գործնականում կիրառում:

Իր հետազոտական աշխատանքում հայցորդը դրսևորել է արդիական և կարևոր գիտական խնդիրները հստակ որոշելու և հաջող լուծելու կարողություն, խորը և բազմակողմանի վերլուծել և գիտական բարձր մակարդակով մեկնաբանել է ստացված արդյունքները: Այս ամենը բնութագրում է հեղինակին որպես որակավորված հմուտ հետազոտողի և գիտաշխատողի:

Հ. Ս. Սարգսյանի ատենախոսական աշխատանքը ամբողջությամբ դրական գնահատելով՝ հարկ ենք համարում նշել մի քանի թերություններ.

1. Ատենախոսությունում ներկայացված առանձին նկարներ / նկ.4 էջ 59, նկ.6 էջ 66, նկ.7 էջ 68/ բարելավում են պահանջում, քանի որ նրանցում ներկայացված թվերի վրա բացակայում է տոկոսի նշանը:
2. Հեղինակների առանձին հղումներում, որոնք ներկայացված են էջերի ներքևի հատվածում /էջ 21, 100/ նշված է աղբյուրը, տարեթիվը, սակայն էջերը նշված չեն:
3. Ատենախոսական աշխատանքը նվիրված է թեթև և չափավոր մտավոր զարգացման խանգարում ունեցող կրտսեր դպրոցականների ինքնասպասարկման կարողությունների և հմտությունների զարգացման մոտեցումների մշակմանը: Հետազոտությունը կատարվել է բավականին վաղ շրջանում, սակայն աշխատանքն այսօր էլ արդիական է և անհրաժեշտ:
4. Աշխատանքը կշահեր, եթե ուսումնասիրության ընթացքում լուսաբանվեր բազմամասնագիտական և մանկավարժահոգեբանական աջակցություն իրականացնող թիմերի անդամների գործունեությունը:
5. Աշխատանքը կշահեր, եթե կրտսեր դպրոցականների ինքնասպասարկման կարողությունների և հմտությունների ցուցանիշները զուգորդվեր բարձր դասարանցիների նշված ցուցանիշների հետ:
6. Աշխատանքում առկա են առանձին մտքերի և արտահայտությունների կրկնություններ /ներածություն, Գլուխ 1, 2, գլուխների ամփոփում/:

Արված դիտողությունները չեն իջեցնում Հ. Ս. Սարգսյանի աշխատանքի արժեքը, այն ինքնուրույն, ավարտուն հետազոտություն է, որում կատարված է տեսական ընդհանրացում, տրված է արդիական գիտական խնդրի լուծում: Ինքնասպասարկման զարգացման գիտամեթոդական հիմունքների մշակումը ունի կենսական կարևոր նշանակություն թեթև և չափավոր մտավոր զարգացման խանգարում ունեցող կրտսեր դպրոցականների համար:

Ատենախոսությունը գրված է գիտական պատշաճ մակարդակով, պահպանված է նյութի շարադրման տրամաբանական հաջորդականությունը, ունի տեսական և գործնական որոշակի արժեք: Հեղինակը ցուցաբերել է անհրաժեշտ գիտական և մասնագիտական պատրաստվածություն:

Ատենախոսության սեղմագիրը և գիտական հրապարակումները արտացոլում են ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթները:

Վերը նշվածը թույլ է տալիս մեզ կատարել հետևյալ ընդհանրացումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը, նորույթը, տեսական, գործնական և սոցիալական նշանակությունը, ինչպես նաև ստացված նյութերի ինքնատիպությունն ու հավաստիությունը, արդյունքներն ու հետևությունների հիմնավորումը թույլ են տալիս համարել, որ Հասմիկ Սերգեյի Սարգսյանի «Մտավոր հետամնաց կրտսեր դպրոցականների ինքնասպասարկման հմտությունների զարգացման մանկավարժական պայմանները» ատենախոսությունը ավարտուն, ինքնուրույն աշխատանք է, համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.03 «Հատուկ մանկավարժություն» /Օլիգոֆրենոմանկավարժություն/ մասնագիտական թվանիշին, իսկ ատենախոսը լիովին արժանի է գիտական աստիճանի հայցման:

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի ժ.պ.,
Մ. գ. թ., դոցենտ՝ Լ. Գ. Բաղդասարյան

Լ. Գ. Բաղդասարյանի ստորագրությունը հաստատում եմ
ՀՊՀ-ի գիտ. քարտուղար,
Մ. գ. թ., դոցենտ՝ Ս. Ս. Բեժանյան